ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է ՀՀ ոստիկանության ք. Երևան, Էրեբունի համայնք, Խորենացի 158 հասցեում տեղակայված շենք-շինությունների հիմնանորոգման-վերակառուցման (կառուցման) նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/18 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/18 պայմանագրում 2021 թվականի մարտի 19-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

1) Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 25.02.2021թ. N 257-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/18 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.12 կետեր:
2) Փոփոխության առաջացման պատճառ	Կատարողի բանկային վավերապայմանների փոփոխության անհրաժեշտություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում փոխվել են Կատարողի բանկային վավերապայմանները:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

10.09.**2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ**-20/18 **գնման պայմանագրի**

ք. Երևան 19 .03.2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Համաշիննախագիծ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Հ. Լևոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.02.2021թ. N 257-Ն որոշումը և ՀՀ ոստիկանության ք. Երևան, Էրեբունի համայնք, Խորենացի 158 հասցեում տեղակայված շենք-շինությունների հիմնանորոգման-վերակառուցման (կառուցման) նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 10.09.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/18 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.12 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագիրը լրացնել նոր հավելված N 2-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1.1.2 Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում Կատարողի բանկային վավերապայմաններում <<<<Ամերիաբանկ>> ՓԲԸ Մոսկովյան մ/ճ, Հ/Հ 1570063611560100>> բառերը և թվերը փոխարինել <<<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Հ/Հ 1150006797427465>> բառերով և թվերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	**ԿԱՏԱՐՈՂ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Եղվարդ, Սաֆարյան 3-րդ նրբ. 8 տուն
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150006797427465
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 03309254
Հ/Հ 900011037109	
ՀՎՀՀ 01840085	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան	Հ. Լևոնյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
10.09.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/18 պայմանագրի
19 .03.2021 թ. կնքված N 1 համաձայնագրի

<<Հավելված N2
10.09.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/18 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ ոստիկանության ք. Երևան, Էրեբունի համայնք, Խորենացի 158 հասցեում տեղակայված շենք-շինությունների հիմնանորոգման-վերակառուցման (կառուցման) նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/4	ՀՀ ոստիկանության ք. Երևան, Էրեբունի համայնք, Խորենացի 158 հասցեում տեղակայված շենք-շինությունների հիմնանորոգման-վերակառուցման (կառուցման) նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	-	-	30 900 000	30 900 000	30 900 000	30 900 000	30 900 000	30 900 000	30 900 000	30 900 000	30 900 000	30 900 000	30 900 000

>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011037109
ՀՎՀՀ 01840082

Գլխավոր քարտուղար՝
_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Համաշիննախագիծ>> ՍՊԸ
ք. Եղվարդ, Սաֆարյան 3-րդ նրբ. 8 տուն
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150006797427465
ՀՎՀՀ 03309254

Տնօրեն՝
_____ Հ. Լևոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 1486-02

«17» 03 2021

Բենեֆիցիար՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե

«ՀՀ ք.Երևան Հանրապետության Հրապարակ կառավարական տուն 3»

Տեղեկացնում ենք Ձեզ, որ **«ՀԱՄԱՇԻՆՆԱԽԱԳԻԾ»** ՍՊԸ -ի օգտին՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի հետ 10.09.2020 . թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/18 պայմանագրով **«ՀԱՄԱՇԻՆՆԱԽԱԳԻԾ»** ՍՊԸ -ի ստանձնած պարտավորությունների ապահովման նպատակով, «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից 28.12.2020թ.-ին թողարկված 32,657,400.00 ՀՀ դրամ գումարի չափով թիվ 7973-02 որակավորման ապահովման բանկային երաշխիքի գործողության ժամկետը համարում ենք երկարաձգված մինչև 15.07.2021թ.:

Վարչության նախագահ՝ Ա. Սարգսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 7973-02

«28» 12 2020

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/18 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում **«ՀԱՄԱՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ**-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/18 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով **«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 32,657,400 (**երեսուներկու միլիոն վեց հարյուր հիսունյոթ հազար չորս հարյուր**) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/18 ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 30/04/2021թվականը:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/18 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Ա.Սարգսյան

Գլխավոր հաշվեպահ՝ Ն.Սարգսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 1485-02

«17» 03 2021

Բենեֆիցիար՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե

«ՀՀ ք.Երևան Հանրապետության Հրապարակ կառավարական տուն 3»

Տեղեկացնում ենք Ձեզ, որ **«ՀԱՄԱՇԻՆՆԱԽԱԳԻԾ»** ՍՊԸ -ի օգտին՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի հետ 10.09.2020 . թիվ ՀՀՔԿ-ԳՀԼՍԾՁԲ-20/18 պայմանագրով **«ՀԱՄԱՇԻՆՆԱԽԱԳԻԾ»** ՍՊԸ -ի ստանձնած պարտավորությունների ապահովման նպատակով, «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից 28.12.2020թ.-ին թողարկված 3,090,000.00 ՀՀ դրամ գումարի չափով թիվ 7971-02 որակավորման ապահովման բանկային երաշխիքի գործողության ժամկետը համարում ենք երկարաձգված մինչև 15.07.2021թ.:

Վարչության նախագահ **Ա. Սարգսյան**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 7971-02

«28» 12 2020

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և **«ՀԱՄԱՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ** -ի միջև կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/18 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով **«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **3,090,000** (**երեք միլիոն ինսուն հազար**) **ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում:
Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/18 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 30/04/2021թվականը:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/18 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Ա.Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն.Սարգսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am